Մերի Մանուչարյան, *պ.գ.թ.*
Շաքե Ճեպեճյան, *դասախոս*
ՀԱԱՀ

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԴՐԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Գյուղական պայմաններում կան և գործում են զբաղվածության այլ բնագավառներ, որոնց կարելի է դասել արտադրական կամ ոչ արտադրական ոլորտների շարքը, սակայն դրանց առանձնահատուկ բնույթի պատճառով այդ բնագավառներն ուսումնասիրելը և դրանցում զբաղվածության բարձրացման վերաբերյալ առաջարկությունները նպատակահարմար է տալ առանձին: Դրանցից են ապահովագրական, տեղեկատվական, վիճակագրական, կենսաթոշակային և սոցիալական այլ բնույթի ծառայությունները, զինվորական իրավական ծառայության, կառավարման մարմինները, ֆինանսավարկային, հարկային և բանկային համակարգերի գրասենյակները և ծառայությունները, մասնագիտական, այդ թվում՝ գյուղատնտեսական ծառայությունները («Հայագրոգիտասփյուռ», «Ագրոմաքետինգ», գյուղատնտեսական տեսչություններ և վարչություններ (մարզային), գիտահետազոտական հիմնարկներ, դրանց փորձադաշտերի և հենակետերի աշխատակազմ, միջազգային կազմակերպություններ և այլն:

Մեր կողմից սրանցից յուրաքանչյուր խմբի գործունեության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այս բնագավառների գործունեության բնույթը և տեղը տվյալ գոտու տնտեսական կյանքում տարբեր է և, բնականաբար, տարբեր են դրանց զարգացման հեռանկարները:

Առաջին հերթին դա վերաբերվում է գյուղատնտեսական ապահովագրությանը (ապահովագրություն տարերային աղետներից, (հատկապես կարկտահարությունից), բույսերի զանազան վնասատուներից և հիվանդություններից և այլն):

Մեր կարծիքով, ինչպես գյուղատնտեսության մեջ, այնպես էլ մնացած բնագավառներում, ապահովագրական ծառայությունները նպատակահարմար է ստեղծել այլընտրանքային սկզբունքով՝ պետական, խառը և մասնավոր հիմքի վրա: Մնացած դրական կողմերի (բարձրորակ սպասարկում, ցածր տոկոսով ապահովագրություն և այլն) հետ մեկտեղ դա կօգնի այս բնագավառում լրացուցիչ ստեղծել զգալի թվով աշխատատեղեր:

Այսօր գյուղում ստեղծված են տեղեկատվական ծառայության սաղմերը: Այս ծառայության դերը ցանկացած բնագավառի համար գնալով մեծանում է՝ սկսած վիճակագրական մարմիններից մինչև զբաղվածության մասին տեղեկատվության մարմինները, ուստի մոտակա հեռանկարում, համակարգչային տեխնիկայի ներդրման հետ այստեղ աշխատատեղերի և աշխատանքների ծավալը կավելանա առնվազն 3-4 անգամ: Հատկապես մեծ տեղ պետք է տրվի վիճակագրության զարգացմանն ու կատարելագործմանը, որը գտնվում է բարձիթողի վիճակում:

Մեծ է ֆինանսավարկային մարմինների դերը, որոնք առայժմ շատ քիչ են օգնում գյուղին: Գյուղը վարկային օժանդակություն գրեթե չի ստանում, իսկ ստացածն էլ, շատ բարձր տոկոսադրույքների պատճառով, քչերին է մատչելի: Այստեղ պետության և օտարերկրյա ֆինանսական մարմինների ներդրումներից բացի, մեծ դեր կարող է խաղալ կոոպերատիվ բանկերի ստեղծումը, որոնց կողմից ցածր տոկոսադրույքներով վարկերի տրամադրումը մեծապես կարող է նպաստել տնտեսության և զբոսաշրջիկության զարգացմանը:

Մեծ չափով աճել է հարկային մարմինների աշխատանքի ծավալը: Լրիվ ծավալով հարկերի գանձումը, անցումը գյուղացիական տնտեսություններից և այլ հարկման սուբյեկտներից զանազան հարկերի սահմանմանն և գանձմանը, մեծապես կավելացնի հարկային մարմինների աշխատանքի ծավալը և դրանցում աշխատողների թիվը:

Ինչպես նշվեց վերևում, ներկայումս կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների ու շրջանային գյուղվարչությունների վերացումից հետո խիստ նվազել են գյուղատնտեսությանը սպասարկող մասնագետ կադրերը, որը մթերատվության և բերքատվության ու ամբողջությամբ վերցրած գյուղատնտեսական արտադրության արդյունավետության իջեցման հիմնական պատճառներից մեկն է: Գյուղին գյուղատնտեսական մասնագիտական օգնություն ցույց տվող, կարելի է ասել, միակ հիմնական ծառայությունը «Ագրոգիտասփյուռ»-ն էր, որն իր գործակալություններն ուներ բոլոր նախկին շրջաններում և այս բնագավառում ընդգրկել էր հանրապետության մի քանի տասնյակ մասնագետների: Սակայն մեկ մասնագետը, որքան էլ որակյալ լինի, չի կարող լիարժեք օգտակար լինել բոլոր մասնագիտությունների գծով, իսկ գյուղատնտեսության մարզային ծառայությունների աշխատանքը, անգամ ցանկալի մակարդակով կատարվող, սիմվոլիկ կամ տեսչական բնույթ է կրում:

Այստեղ ելքը տեսնում ենք տեղական համայանքներին կից տնտհաշվարկային մասնագիտական ծառայությունների ստեղծման մեջ, որոնց կազմավորման առաջին (սկզբնական) փուլում պետությունը պետք է մասնակիորեն ֆինանսավորի դրանց գործունեությունը, որպեսզի նպաստի դրանց կայացմանը: Այս դեպքում հանրապետության գյուղատնտեսության մեջ լրացուցիչ կարգով աշխատանք կունենան և գյուղացիական տնտեսություններին լիարժեք ծառայություններ կմատուցեն շուրջ 3500-4000 գյուղատնտեսության մասնագետներ: Ինչ վերաբերվում է «Ագրոգիտասփյուռ»-ի գործունեությանը, ապա այն այսօր գործնականորեն չի գործում:

Կապված կենտրոնացված կառավարման մարզային համակարգի ստեղծման հետ, հանրապետության նախկին շրջանների բազայի վրա ստեղծված 10 մարզային կառույցների կառավարման ապարատում ընդգրկված աշխատողների թիվը շուրջ 2,5 անգամ պակաս է նախկինից: Նախկին՝ շրջանային օղակում, կրճատված ձևով, դեռևս պահպանվում են վիճակագրության, սոցիալական ապահովության, դատաքննչական, առողջապահական և մի քանի այլ ծառայություններ: Այսպիսի համակենտրոնացումը, ինչպես ցույց են տալիս մեր ուսումնասիրությունները և վերջին մի քանի տասնամյակներում կուտակված կառավարման փորձը (օկրուգների ստեղծում, շրջանների, գյուղատնտեսական վարչությունների միավորում), սպասվելիք արդյունավետություն չի ապահովվում: Ուստի վերադարձը կառավարման շրջանային կառուցվածքին կարող է բարձր արդյունավետություն ապահովել, դրանով ավելի քան կրկնակի անգամ ավելացնելով նաև այդ ապարատում զբաղվածների թիվը: Ընդ որում, շուկայական հարաբերությունների անցման շրջանում, բնակչության սոցիալական պաշտպանվածության աստիճանի ավելացումը զգալիորեն կապված կլինի սոցիալական ծառայության ոլորտի զարգացման և դրանում աշխատողների թվի ավելացման հետ:

Շուկայական հարաբերությունների զարգացման պայմաններում կարևոր է գյուղատնտեսական արտադրանքի իրացմանը նպաստող մարքետինգային ծառայությունների աշխատանքը և, դրա հետ կապված, ձեռնարկչատիրական գործունեության ակտիվացումը: Ներկայումս գործող «Հայագրոմարքետինգ» պետական ձեռնարկության ստորաբաժանումներն ունեն սահմանափակ թվով աշխատողներ և էական դեր չեն խաղում: Աշխատանքի հաջող կազմակերպման դեպքում հանրապետությունում գյուղատնտեսական մեծածախ շուկայի ստեղծման ավարտից և մարզերում դրա

հավաքման կետերի կազմակերպումից, գյուղատնտեսական արտադրության կայունացումից և հեռանկարում դրա վերելքից հետո տեղերում գործող գյուղատնտեսության մարքետինգային ծառայությունների աշխատանքը կաշխուժանա: Կավելանա դրանցում մթերումներով և իրացմամբ զբաղվածների թիվը: 1999-2000թթ. արդեն սկսվել էր մարզերում մեծածախ շուկայի տեղական հավաքման կետերի կազմակերպման նախապատրաստական աշխատանքը, հավաքագրվում էր դրանց անձնակազմը, սակայն, ամբողջությամբ վերցրած, հանրապետությունում այս բնագավառում առկա են լուրջ դժվարություններ ու բացթողումներ, սխալներ՝ այս աշխատանքի ավարտման գործում, և մինչ այժմ էլ այս հարցում դրական տեղաշարժ չկա:

Մեծածախ շուկայի կազմակերպման աշխատանքների ձգձգումը հարցականի տակ է դնում դրա շինարարության ավարտումը և ստեղծումն ընդհանրապես, չնայած միջազգային կազմակերպությունները, որոնք 24,3 մլն. դոլարի վարկ էին տրամադրել (Վերականգնման և զարգացման եվրոպական բանկ) մեծածախ շուկայի ստեղծման համար, նշանակալից վարկային և դրամաշնորհային օգնություն էին ցույց տալիս նաև գյուղատնտեսական գիտության, մթերքների արտադրության, պահպանության, վերամշակման, սորտային սերմացուի ձեռքբերման և այլ հարցերում:

Արարատյան հարթավայրում է տեղավորված գյուղատնտեսության համակարգի գիտական հիմնարկների, դրանց մասնաճյուղերի, հենակետերի և փորձնական տնտեսությունների ճնշող մեծամասնությունը: Գիտական աշխատանքների կազմակերպման վերակառուցման սկսված հայ-ամերիկյան համատեղ ծրագրով, ունեցած 13 գիտահետազոտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների բազայի վրա ստեղծվել են հետազոտական կենտրոններ, որոնցում ավելի քան կիսով չափ կրճատվել են գիտական աշխատողների թիվը, և հետազոտությունները կենտրոնացվել են առավել կարևոր ուղղություններում: Գիտական թեմատիկան ձևավորվում է տեղերում՝ մարզային կառույցներում, իսկ դրանց մշակումները իրագործվում են գիտական կենտրոններում՝ մրցույթային կարգով: 2012թ. դրանց մեծ մասը ներառված է Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարանի կառուցվածքում:

Հաշվարկները ցույց են տալիս, որ միայն Արարատյան հարթավայրի գյուղական կյանքի այլ ոլորտներում, վերը նշված փոփոխությունների պայմաններում, ներկայիս 3,0 հազարի փոխարեն կաշխատի շուրջ 17,7 հազար, իսկ ամբողջությամբ վերցրած հանրապետությունում՝ 52 հազար մարդ:

Առաջարկվող միջոցառումների իրականացումը գյուղական բնակավայրի վերը թվարկված ոլորտներում (ներառյալ արտադրական և ոչ արտադրական ոլորտները) որոշակի լրացուցիչ զբաղվածություն կապահովի, սակայն չի կարողանա լիովին լուծել գործազրկության հիմնախնդիրները: Դրանում որոշակի դեր կարող է խաղալ նաև զբոսաշրջության ակտիվացումը և զարգացումը:

Համառոտագիր

Բանալի բառեր-զբաղվածություն, գյուղական բնակավայրեր, կադրեր, ոլորտ, շուկա

Գյուղական պայմաններում կան և գործում են զբաղվածության այլ բնագավառներ, որոնց կարելի է դասել արտադրական կամ ոչ արտադրական ոլորտների շարքը: Մեր կողմից սրանցից յուրաքանչյուր խմբի գործունեության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այս բնագավառների գործունեության բնույթը և տեղը տվյալ գոտու տնտեսական կյանքում տարբեր է և, բնականաբար, տարբեր են դրանց զարգացման հեռանկարները:

Առաջարկվող միջոցառումների իրականացումը գյուղական բնակավայրի վերը թվարկված ոլորտներում որոշակի լրացուցիչ զբաղվածություն կապահովի, և որոշ չափով կլուծի գործազրկության հիմնախնդիրները:

Գրականություն

1. ՀՀ ԱՎԾ, Հայաստանի ազգային վիճակագրական տարեգիրք, Երևան 2014
2. Լ. Լ. Հակոբյան, «Հայաստանի Հանրապետության ագրարային աշխատանքի էկոնոմիկա», Երևան 2014, 342 էջ
3. Ս. Պողոսյան, «Աշխատանքի տնտեսագիտություն», Երևան 2004

АННОТАЦИЯ

Мери Манучарян, *к.э.н.*
Шаке Чепечян, *лектор*
НАУА

ЗАНЯТОСТЬ И ПРОБЛЕМА ОБЕСПЕЧЕННОСТИ ПРОФЕССИОНАЛЬНЫМИ КАДРАМИ В СЕЛЬСКОМ ХОЗЯЙСТВЕ РА

Ключевые слова – занятость, сельские районы, кадры, сфера, рынок

В сельских условиях есть и действуют другие сферы занятости, которые могут быть отнесены к числу производственной или не производсвтенной секторов. Исследования для каждой из этих видов деятельности показали, что характер деятельности этих отраслей и их место в экономической жизни этой области отличаются и, конечно, отличаются преспективы их развития.

Реализация предложенных мероприятий в выше перечисленных сферах сельских районов обеспечит дополнительную занятость, и в какой-то степени поможет решить проблемы безработицы.

ANNOTATION

Meri Manucharyan, *Ph.D*
Shake Chepechyan, *Lecture*
Armenian National Agrarian University

EMPLOYMENT AND THE PROFESSIONAL STAFF IN AGRICULTURE RA

Key words – employment, rural settlements, staff, sphere, market.

In rural conditions there are and operate other areas of employment, which can be attributed to series of manufacturing or nonmanufacturing sectors. In our study each of these group's activities showed that the character of activity of this areas and the place in the economic life of the zone is different and of course, are different the perspectives of their development.

The proposed implementation of measures in rural settlement areas listed above will provide additional employment and is somewhat will solve the problems of unemployment.